ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար հեռախոսային ցանցերի պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/06» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի հունիսի 18-ին կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/06» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի փետրվարի 19-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ: Ֆինանսական միջոցներ նախատեսվել են 2026թ. (12 ամսվա) ընթացքում հեռախոսային ցանցերի պահպանման ծառայությունների մատուցման համար:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը 2026թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.14 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ 18.06.2025թ. N «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/06» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«19» «02» 2026թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Արթուր Սարգսյան Անատոլիի ԱՁ-ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 18.06.2025թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/06» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի **6 852 500 (վեց միլիոն ութ հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ** ընդհանուր գնից 2026թ. (12 ամսվա) համար **3 426 250 (երեք միլիոն չորս հարյուր քսանվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամի** չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը 2026թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրի պայմանները կիրառվում են 05.01.2026թ.-ից Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև Համաձայնագիրը կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	**Արթուր Սարգսյան Անատոլիի ԱՁ**
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Բաբաջանյան փ. 42/5շ./53
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 78707119
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 2473607160020000
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ԲԲԸ
Ղեկավար՝ Ն. Գալստյան	Արթուր Սարգսյան Անատոլիի
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 19 » « 02 » 2026թ. կնքված N 2 համաձայնագրի

(Հավելված N 2
« 18 » « 06 » 2025թ. կնքված
N «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/06» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	50331160/1	Հեռախոսային ցանցերի պահպանման ծառայություններ	571 041,67	856 562,50	1 142 083,33	1 427 604,17	1 713 125	1 998 645,83	2 284 166,67	2 569 687,50	2 855 208,33	3 426 250	**3 426 250**	

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Արթուր Սարգսյան Անատոլիի ԱՁ
Հասցե՝ ք. Երևան, Բաբաջանյան փ. 42/5շ./53
ՀՎՀՀ՝ 78707119
Հ/Հ՝ 2473607160020000
«Արդշինբանկ» ԲԲԸ

Արթուր Սարգսյան Անատոլիի

_____
/ստորագրություն/
Կ.Տ